

ՄՏԵԲԱՆՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ ԱՍՈՂԻԿԸ ԵՎ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՔՆՆԻԿՈՆԸ»

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պատմիչ Ստեփանոս Տարոնացի Ասողիկը ապրել է X դարի երկրորդ և XI դարի առաջին կեսերին: Նրա գլխավոր աշխատությունը «Տիեզերական պատմությունն» է, գրված Սարգիս կաթողիկոսի (922—1019 թթ.) հրամանով, որի մոտ ծառայում էր Ստեփանոս վարդապետը և որի կարգադրությամբ զբաղված էր «Վանքերը շրջագայելով և եկեղեցու հոգսերով»: «Տիեզերական պատմությունը» բաժանված է երեք հանդեսի: Առաջինը խորայնացոց, պարսից, պտղոմյան, հռոմայեցոց, ասորեստանցոց, մարաց, պարթևաց և հայոց թաղավորների իրիստ համառոտ պատմությունն է (էջ 5—53): Երկրորդը Հայոց համառոտ պատմությունն է Տրդատից մինչև Աշոտ I Բագրատունին, ուր դրում է նաև հայոց կաթողիկոսների մասին՝ մինչև Գևորգ Գառնեցի (էջ 59—145): Այս երկու հանդեսները ունեն միևնույն՝ «Պատմութիւն բանի ի պատմագրական տառից» խորագիրը, որը ցույց է տալիս, թե նյութը քաղված է նախորդ պատմագիրներից:

Երրորդը «Պատմութիւն ժամանակաց ինքնախօսութիւն» (էջ 149—286)՝ հանդեսն է և պարունակում է 117 տարվա պատմություն՝ Աշոտ I-ից մինչև Գագիկ I թագավորների ժամանակները: Ընդ որում առաջին երեք թագավորների մասին նյութը նույնպես քաղել է նախորդ պատմագիրներից, իսկ 929 թ. Աբաս թագավորից սկսած, իսկական ինքնախօսությունն է: Այն հասնում է մինչև Գագիկ I-ի տասնհինգերորդ տարին՝ 1004 թ., որը նաև «Պատմութեան» ավարտման տարին է:

«Պատմութեան» երկրորդ հանդեսում, խոսելով Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի մասին, հաղորդում է կենսագրական որոշ տեղեկություններ, ապա շարունակում. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց՝ եւ հրամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել Վֆննիկոնն հրաշագան, յորում զտոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասա խորհեալ ժողովով եւ եպիսկոպոսաւք հաստատել Վֆննիկոնն, և վախճանի կացեալ յաթոռն ամս 2 (6)»¹:

Ստեփանոս Տարոնացուց, այսպիսով, իմանում ենք, որ Անաստաս կաթողիկոսը մտածում է կարգել հայոց անշարժ տոմար ուրիշ ազգերի տոմարներին համապատասխան և այդ առիթով հրամայում է Անանիա Շիրակացուն շարադրել «Քննիկոնը», որի մեջ կլինեն նաև հայոց անշարժ տոմարը: Անանիա Շիրակացին կատարում է հրամանը, հորինում է «հրաշագան Քննիկոնը», որի մեջ շարադրված էր նաև հայոց անշարժ տոմարը: Կաթողիկոսը մտածում է «ժողովով և եպիսկոպոսներով» հաստատել «Քննիկոնը», բայց վախճանվում է՝ գահակալելով ընդամենը վեց տարի:

Սա, մասնավորապես, նշանակում է.

ա. Հայոց անշարժ տոմարը գտնվում էր «Քննիկոնի» մեջ:

բ. «Քննիկոնը» ավարտված էր արդեն մինչև Անաստաս կաթողիկոսի մահը, այսինքն 667 թ.:

Ստեփանոս Տարոնացուց առաջ Անանիա Շիրակացու մասին առաջինը տեղեկություն է հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոս

¹ Ստեփանոս Տարոնացի. Պատմութիւն տիեզերական, աշխատ. Ստ. Մալխասյանի. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 99:

պատմիչը իր «Պատմութիւն Հայոց» երկում², դարձյալ Անաստաս կաթողիկոսի առնչութեամբ և նույն շարժառիթով, միայն չի նշում «Քննիկոն» բառը: Նա ևս տալիս է որոշ մանրամասնութիւններ. կաթողիկոսի մահից հետո Անանիա Շիրակացու գործը անուշադրութեամբ է մատնւում. տոմարը գործածութեան մեջ չի դրւում, շարունակում են ղեկավարել շարժական տոմարով: Իսկ Շիրակացու «Քննիկոնը», Գրիգոր Մագիստրոսի վկայութեամբ, պահւում է կաթողիկոսարանում, մինչև որ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը (1019—1058 թթ.) նրա խնդրանքով մի օրինակ ուղարկում է իր դպրոցում դասավանդելու³:

Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Ասողիկը և Գրիգոր Մագիստրոսը այն մատենագիրներն են, որոնցից առաջինը՝ լինելով կաթողիկոս, մյուսները՝ կաթողիկոսներին մոտ կանգնած մարդիկ, տեսել և ընթերցել են Անանիա Շիրակացու «Քննիկոնի» արգելւած ինքնագիրը և նրա մասին հաղորդում են ճշմարտացի տեղեկութիւններ:

Ստեփանոս Տարոնացին ոչ միայն տեսել, այլ նաև օգտագործել է «Քննիկոնը» որպէս իր պատմութեան աղբյուր, մասնավորապէս նրա մեջ ղեկավարած հայոց անշարժ տոմարի մաս հանդիսացող ժամանակագրութիւնը:

Հայտնի է, որ Ստեփանոս Տարոնացու «Պատմութիւնից» թերթեր են պակասում, որոնցից են նաև Աղամի ցեղագրութեան շարադրանքը պարունակող թերթերը⁴, Պատմիչը խոստանում է. «Արդ սկիզբն արասցուք սկզբանս, յորում նախահայրն մեր ել արտաքս ի դրախտէն, փշալից երկիր եղեալ ժառանգորդ. ընդ որ թուեն զայս ձև օրինակի» և շարունակութեան մեջ կարդում ենք. «Ժամի հինգերորդի եօթնասներորդի կենացն Աբրահամու յայտնեցաւ նմա Աստուած» և այլն⁵: Պակասն ակնհայտ է, սակայն հայտնի է շարունակվող նյութի աղբյուրը: Այն առնված է Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութիւն պատմական» երկից⁶ և զբաղեցնում է Տարոնացու «Պատմութեան» 1885 թ. հրատարակութեան համարյա ամբողջ 8-րդ էջը, բացառութեամբ վերջին պարբերութեան⁷: Այդ էջում է գտնւում Աբրահամից Մովսէս ցեղագրական ցանկը, մասնակի տարբերութիւններով:

Ներկայացնում ենք նշված տեղիները Եվսեբիոսի և Տարոնացու բնագրերի նմանութիւնն ու տարբերութիւնները ակնհայտ դարձնելու համար:

Եվսեբիոս Կեսարացի էջ 155—156	Ստեփանոս Տարոնացի էջ 8
Ամրամ լեալ ամաց Հ-ից՝ ծնանի զՄովսէս:	Ամրամ ամաց Հ ծնաւ զՄովսէս ի Յոֆաբեթայ կնոջէ իւրմէ:
Մովսէս լեալ ամաց Զ-ից՝ հանէ զժողովուրդն յնգիպտոսէ:	Մովսէս ամաց Զ հանէ զժողովուրդն յնգիպտոսէ:
Միանգամայն ընդ ամենայն յառաջնմէ ամէն Արահամու մինչև ցնլսն յնգիպտոսէ ամք ՇԵ:	Միանգամայն յառաջին ամէն Աբրահամու մինչև ցնլսն՝ ամք ՇԵ, և Աղամայ վՊԹ:
Եւ ընդ ամենայն յԱղամայ մինչև ցնլսն յնգիպտոսէ ըստ եօթանասնիցն ամք վՊԹ:	

² Հովհաննես Դրասխանակերտցի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 92—93:

³ Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8—10:

⁴ Ստեփանոս Տարոնացի, էջ 7—8, հմմտ. էջ 295, ծան. 10:

⁵ Նույն տեղում, էջ 7—8:

⁶ Եվսեբիոս Կեսարացի. Ժամանակականք երկմասնեայ. մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 152, 154—155: Համապատասխան հատվածը Տարոնացու «Պատմութեան» ծանոթագրութիւններում բերել է Ստ. Մալխասյանցը (էջ 296, ծան. 11):

⁷ Ստեփանոս Տարոնացի, էջ 8:

կվսերիոսից բերված քաղվածքում ընդգծված բառերը բացակայում են Տարոնացու մոտ, իսկ վերջինիս մոտ ընդգծված բառերը Տարոնացին Եվսեբիոսից չի վերցրել, նրանք այլ աղբյուրից են։ Այդ նկատի ունենալով, պատմիչը անմիջապես շարունակում է. «Արժանի հաւատարմութեան առն զժամանակագրութիւնս շրջագայեն յոյժ գեղեցկապէս, քանզի ՎՊԹ (3809) ամդ ստուգապէս դիսկեցուցանէ տասն երեք (13) նիսանայ Ելիցն յԵգիպտոսէ»։

Իսկ Ելիցն յԵգիպտոսէ սինչև ցշինուած տաճարին, ըստ Որոգինեայ և Անանիայի Շիրակացույ ժողովին ամք ՆՂ (490)...»⁸։

«Արժանի հաւատարմութեան առն» Ե. Դիւլորիեն համարում է Անանիա Շիրակացուն։ Ստ. Մալխասյանցը համամիտ է նրան, որ «մեծաւ եւս իրաւամբ ւարն հաւատարիմ համարի զԱնանիա Շիրակացի»⁹։

Իսկ Ստեփանոս Տարոնացին բոլոր հիմքերն ունի Անանիա Շիրակացուն արժանահավատ այր անվանելու, քանի որ ծանոթ էր նրա «Քննիկոն» համայնագիտարանին, որը և կոչում էր «Քննիկոն հրաշագան», ինչպես կոչում էին Աստվածաշնչի թարգմանության հետ Որոգինեսի կատարած գործը («հրաշդան և մեծարգի եցոյց զեւթանասնիցն թարգմանութիւնս՝ քան դայլոցն») ¹⁰։ Տարոնացին այստեղ վկայում է, որ Որոգինեսը և Շիրակացին Ելբից (Եգիպտոսից) մինչև տաճարի շինարարութիւնը համարում են ՆՂ (490) տարի։

Շիրակացուն է պատկանում նաև նախորդ վկայութիւնը՝ Աղամից մինչև Նյբր ՎՊԹ (3809) տարի, որն ընդունում է Տարոնացին, հակառակ Եվսեբիոս Կեսարացու առաջարկած յոթանասնից թարգմանության ՎՈԶԹ (3689) տարվա։ Եվ այն ընդունում է մեծ վստահութամբ, քանի որ գիտնականը ժամանակագրութիւնը այնպիսի ճշգրտութամբ է շարադրել, որ Ելբը հանդիպում է եբրայեցիների գարնանամուտին, նիսան ամսի 13-ին։

Շիրակացուց է վերցրած նաև Մովսեսի մոր՝ Հոբարեթի անունը։ Այսպիսով, Տարոնացու «Պատմութեան» սույն հատվածում ունենք Անանիա Շիրակացու «ժամանական կանոնից» վերցրած երեք վկայութիւն։ Սակայն սրանով չեն սահմանափակվում Շիրակացուց կատարված մեջբերումները։ «Պատմութեան» մեջ սույն վկայութիւններից մի փոքր հետո, հաջորդ էջում, Տարոնացին բառացի բերում է Անանիա Շիրակացու «ժամանական կանոնից» մի կարևոր քաղվածք, դարձյալ Ելբի մասին։ Կրկին անդրադառնալով հրեաների կգիպտոսից դուրս գալուց մինչև Սողոմոնի տաճարի շինության սկզբի միջև ընկած տարիների քանակին, որ «Հրէիցն վարդապետք և Եւսեբի ժամանակագիր ՆԶ (480) ամ ասեն յԵլիցն յԵգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին։ Իսկ Որոգինէս և Անանիա ՆՂ (490) ամ ասեն, համարելով եւ չԺ ամն Եզոնի դատաւորի»¹¹, Տարոնացին շարունակում է. «Եւ վասն ճառելոց գրոց թագաւորութեան ՆԽ (440) ամին, այսպէս ասէ, եթէ. «Յորժամ զՅորդանանաւ անց ժողովուրդն և յԵրկիրն Աւետեաց առկայացաւ զայն Եւ կոչէ ուրպէս եւ պատգամաւորէին առ միմեանս թագաւորէն՝ Եթէ Ազգ ել յԵգիպտոսէ»¹²։

Ստ. Մալխասյանցը, նկատելով, որ Ասողիկի «Պատմութեան» 8-րդ էջում «արժանի հաւատարմութեան առն» նախադասության մեջ «Ե. Դիւլորիէ մեծաւ եւս իրաւամբ զայն հաւատարիմ համարի զԱնանիա Շիրակացի, որոյ անուն յիշատակի ի Պատմութեանն սակաւ մի զկնի», շարունակում է. «Նմին Անանիայ Շիրակացույ վերագրէ Ե. Դիւլորիէ և զբառս «ասէ», զոր ունի պատմագիրս յէջն 12»¹³։ Այսինքն թէ «Եւ վասն ճառելոյ գրոց թագաւորութեան ՆԽ (440) ամին այսպէս ասէ [Անանիա Շիրակացի] եթէ «Յորժամ...» և ընդգծված մյուս բառերը։

8 Նույն տեղում, էջ 8—9։

9 Նույն տեղում, էջ 296։

10 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. Բ, Վենետիկ, 1837, էջ 134։

11 Ստեփանոս Տարոնացի, էջ 11—12։

12 Նույն տեղում, էջ 12 (ընդգծումներն իմն են—Ա. Մ.)։

13 Նույն տեղում, էջ 296—297, ծան. 12։

Ուրեմն քաղվածքը պատկանում է Անանիա Շիրակացուն և առնված է նրա ժամանակագրությունից, որտեղից նախորդ՝ ՎՆՂ (490) ամս վկայությունը: Եվ Ասողիկը պարզաբանում է. «Որ համարեալ և (40) ամ լանապատին է: Դ (4) ամ Սողոմոնի մինչև զշինուած տաճարին լինին ամք ՆՂ (490) (Սա. Մալխասյանցն է ուղղում բնագրի ՆՂ (430)-ի փոխարեն, էջ 301, ծան. 17), և յառաջին ամէն Արրահամու (505+490) ԶՂԵ (995) ամ և յԱդամայ ՏՄՂԹ (4299) ամք¹⁴: Ուրեմն այս հաշվումները Ասողիկը կատարել է Անանիա Շիրակացու տվյալների հիման վրա, քանի որ այն բացակայում է Եվսեբիոսի մոտ: Ստ. Մալխասյանը սույն քաղվածքի մասին գրում է, որ «վասն 440 ամաց Գ. Թագաւորութեանցն ի ներքո ածէ Ասողիկ զվկայութիւն անծանոթի ուրուք»: Ուրեմն նա համաձայն չէ Ե. Դյուլորիեի կարծիքին, որ քաղվածքը Անանիա Շիրակացուց է: Ստ. Մալխասյանին անհայտ է քաղվածքի աղբյուրը միայն, բայց քանի որ այն ճիշտ է, ուստի բերելով սույն քաղվածքը, հաստատում է Անանիա Շիրակացու հաշվարկը. «...ապա ուրեմն,— գրում է նա,—

Յելիցն յԵփայտոսէ զանցանելն ընդ Յորդանան լինին ամիք 40.

Յանցանելոյն ընդ Յորդանան մինչև ցշինումն տաճարին, ըստ Գ. Թագաւորութեանց ամք 440. եւ 10 ամն Եղոնի, լինին միահամու 40+440+10=490 ամք...», որպէս «Որոգինէս և Անանիա համարեն»¹⁵:

Որ Ե. Դյուլորիեն ճշմարիտ է իր կարծիքի մեջ, առաջին հերթին հաստատում է Անանիա Շիրակացու «Զատկի ճառով»: Անանիա Շիրակացին այդ ճառում նշում է, թե իր «Ժամանական կանոնում» գրել է, որ Հորդանան գետովն անցնելը կոչվում է Ելք Եփայտոսից. «Քանզի եւ զանցանելն զՅորդանան գետովն Ելս կոչէ յԵփայտոսէ, որպէս և ի Ժամանական կանոնի նախապատում հանդեսին մեռոյ էառեցաք»: Հեղինակը նկատի ունի «Ժամանական կանոնից» քաղված «Յորժամ զՅորդանանաւ անց ժողովուրդն են յերկիրն առկայացաւ՝ զայն Ելս կոչէ, որպէս եւ պատգամաւորեն առ միմեանս Թագաւորքն՝ Եթէ Աղգ ել յԵփայտոսէ» իր խոսքերը, որոնց հանդիպում ենք Ասողիկի «Պատմութեան» մեջ. ըստ «Զատկի ճառի» Շիրակացու «Ժամանական կանոնում» «Եւ զանցանելն զՅորդանան գետովն Ելս կոչէ յԵփայտոսէ», Ասողիկի «Պատմութեան» Շիրակացու ժամանակագրությունից քաղվածքում նույնպէս «Յորժամ զՅորդանանաւ անց ժողովուրդն... Ելս կոչէ... Եթէ Աղգ ել յԵփայտոսէ»: Այս քաղվածքը փաստորեն Անանիա Շիրակացու «Ժամանական կանոնից» մի հատված է, որը մեզ է հասել երկու օրինակով. մեկը հեղինակի՝ Անանիա Շիրակացու, «Զատկի ճառի» մեջ բերված, մյուսը՝ Շիրակացու «Ժամանական կանոնն» օգտագործող Ստեփանոս Տարոնացու «Պատմութեան» մեջ: Շիրակացու և Տարոնացու մեջբերումները միասին Դյուլորիեի կարծիքը դարձնում են փաստ:

Ամփոփենք. Ստեփանոս Տարոնացու «Պատմութեան» մեջ Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մասին ունենք հետևյալ վկայությունները.

1. Անաստաս կաթողիկոսը (661—667 թթ.) մտածում է Հայաստանում կարգել անշարժ տոմար և այն հանձնարարում է կատարել Անանիա Շիրակացուն: Վերջինս հորինում է «հրաշազան Քննիկոնը», որի մեջ կարգում է մեր անշարժ տոմարը:

2. Անաստաս կաթողիկոսը մտածում էր Անանիա Շիրակացու «Քննիկոնը», մեր անշարժ տոմարով, հաստատել «Ժողովով և եպիսկոպոսներով» և կիրառել կյանքում, բայց մահանում է:

3. Անանիա Շիրակացին իր Զատկի ճառում հաղորդում է, որ ինքը գրել է «Ժամանական կանոն (այսինքն՝ քրոնիկոն)», որի մեջ նշել է, թե զանցանելն զՅորդանան գետով Ելս կոչէ յԵփայտոսէ: Նույն բանը հանդիպում ենք Ասողիկի «Պատմութեան» մեջ. «[Անանիա Շիրակացի] ասէ. թէ Յորժամ զՅորդանան անց ժողովուրդն և յերկիրն Աւետեաց առկայացաւ՝ զայն Ելս

¹⁴ Նույն տեղում, էջ 12:

¹⁵ Նույն տեղում, էջ 300, 301, ծան. 17:

կողմնի որպէս և պատգամաւորէին առ միմեանս թագաւորքն՝ եթէ Ազգ ել յնգիպտոսէ»¹⁶։

4. Այդ «Ժամանական կանոնից» են առնված հաջորդ վկայութիւնները. ի տարրերութիւն յոթանասնից թարգմանութեան և Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութեան», որտեղ «յեւիցն յնգիպտոսէ մինչև ցշինուածն աաճարին» 430 տարի ևն համարում, Որոգինեսը և Անանիա Շիրակացին 490 են համարում, նրա մեջ առնելով նաև Եղոն դատաւորի 10 տարին։

5. Անանիա Շիրակացին Ադամից մինչև Ելքը Եգիպտոսից հաշվում է ՎՊԹ (3809) տարի, ամիսը՝ նիսանի 13-ը, Արրահամի առաջին տարուց մինչև տաճարի շինումը ՋՂԵ (995=505+490), իսկ Ադամից ՏՄՂԹ (4299) տարի։

6. Շիրակացու «Ժամանական կանոնի» մեջ ազգահամարներում նշված են կանայր, ինչպես Ամրամի կին Հոբաբեթը։

Այսպիսով, Ստեփանոս Տարոնացի պատմիչը մեզ է մատուցում ոչ միայն «Քննիկոնի» մասին բացարձակ ճշմարիտ տեղեկութիւններ, այլև վկայութիւններ նրա մեջ մտնող «Ժամանական կանոնից», որը տոմարի հետ մի բաժին էր կազմում և կոչվում «Քրոնիկոն», ինչպես գրում է ինքը Շիրակացին՝ «Թողորակք Քրոնիկոնին», այնպես, ինչպես «Քրոնիկոն կանոն» կամ պարզապէս «Քրոնիկոն» է կոչվում Եվսեբիոս Կեսարացու հանրահայտ գործը¹⁶։

Մենք կարող ենք նաև ճշտել Շիրակացու «Ժամանական կանոնի» կամ «Քրոնիկոնի» և անշարժ տոմարի տեղը «Քննիկոնում»։ Գրիգոր Մագիստրոսը «Քննիկոնի» բովանդակութիւնը բերում է այսպիսի հերթականութեամբ. աստվածաբանութիւն, թվաբանութիւն, երաժշտութիւն, երկրաչափութիւն, աստղաբաշխութիւն, արհեստներ, գիտութիւններ, մատենագրութիւն, հռետորական ուսումն (մասնակի)։ Տոմարական արհեստը, բնականաբար, պետք է մտնի արհեստների մեջ և անպայման աստղաբաշխութիւնից հետո, ինչպես տեսնում ենք Հակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն տոմարի» աշխատութեան մեջ¹⁷, համապատասխան բացատրութեամբ։

Տարբեր աղբերի մոտ հայտնութեան տոնի օրը ամիս ամսաթիվով նշելուց հետո Շիրակացին գրում է. «Ինչեւորդ՝ Յայտնութիւն, ըստ Հայոց փոփոխմամբ է ըստ չորից չորից ամաց, եւ եթէ զհարդ գիտելի է, եւ կամ ընդէր ոչ առկայացեալ ըստ այլոց ազգաց, իւրում տեղուղ պատմեցից ըստ կարգի տոմարին»¹⁸։

Ուրեմն Հայտնութեան ճառը գրելիս տոմարը դեռ չէր շարադրել։ Այն շարադրված չէր նաև Զատիկի ճառը գրելու ժամանակ, ուր խոսելով լուսատուների մասին խոստովանում է, որ «Վասն չափոյ մեծութեանն և դրից հաստատութեանն, եւ իշխանութեանցն, եւ որոշմանցն, եւ այլոց աստեղաց կարգի հանգամանաց ասելն առ այժմ արգելեցի, մինչեւ բովանդակեցից զխորհուրդ սբբայ զատկիս եւ զտոմար ամենայն ազգաց, եւ ապա պատմեցից վերջ եւս թէ զինչ վասն այսր արտաքինքն եւ զինչ եկեղեցականքն»։ Ուրեմն զատկի խորհուրդը բացահայտելուց հետո միայն պետք է շարադրվեր «զտոմար ամենայն ազգաց», որի հետ, անշուշտ, ինչպես հավատացնում է Տարոնացին, նաև հայոց տոմարը և ապա միայն լուսատուներին կանդրադառնա։

Շիրակացին իր խոստումը կատարում է «Տիեզերագիտութիւն» անվան տակ հրատարակված երկով, որը հենց այդպես էլ սկսվում է. «Զխոստոցեալսն մեր հատուցուր գբան՝ յարտաքնոցն առեալ զառարկութիւն, որպէս զի յետոյ յեկեղեցականն եղեալ մեր՝ գեղեցիկ հետեւեցի շարադասեալ ընդունակք»¹⁹։

¹⁶ Եվսեբիոս Կեսարացի. Ժամանակականք երկմասնեայ. մասն Բ, Վենետիկ, 1818։

¹⁷ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 1114։

¹⁸ ՄՄ, ձեռ. № 2579 էջ 20ա։

¹⁹ Անանիա Շիրակացի. Տիեզերագիտութիւն և տոմար. Երևան, 1940, էջ 1։

Ուրեմն Շիրակացին «Յայտնութեան» և «Զատկի» ճառերից առաջ դրում է ժամանակագրությունը, իսկ հետո՝ հայկական ու մյուս ազգերի տոմարը, «Տիեզերագիտությունը», որից հետո նաև ուրիշ գիտությունները:

Այսպիսով, Անանիա Շիրակացու «Ժամանական կանոնը» մտել է «Քննիկոնի» մեջ քառյակ արվեստներից հետո, հետևաբար այն ավարտված պիտի լինի 667 թ. առաջ, որովհետև հեղինակը նրանից հետո ուրիշ գործեր էլ է շարադրել:

Հայտնության և Զատկի ճառերը (որոնք գրված են նույնպես Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ) «Քննիկոնի» մեջ չեն մտել, բայց նրանց բովանդակությունը հեղինակը օգտագործել է տոմարական բաժնի համապատասխան մասերում: Այդ ճառերը գտնվել են Հայոց կաթողիկոսարանի Մատենադարանում, բայց ոչ «Քննիկոնի» մեջ՝ գրվանի տակ: Ուստի և արտագրվել են մինչև Պետրոս Գետադարձի գահակալությունը (որի ժամանակ միայն «Քննիկոնից» օգտվելու հնար եղավ):

Ստեփանոս Տարոնացու «Պատմութեան» վերը բերված վկայությունները հնարավորություն են տալիս ստուգելու Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրական և պատմագրական որոշ երկերի վավերականությունը, համոզվելու, թե դրանք իսկապե՞ս Անանիա Շիրակացուն են պատկանում, թե՛ թյուրիմացաբար են վերագրվել նրան:

Մաշտոցի անվան Մատենադարանի 981 թ. գրված № 2679 ձեռագրի 29ա 70բ էջերում գտնվում է ժամանակագրությունների շարք, որն ունի «Մովսեսի հորենացույ եւ Անդրեասի» խորագիրը:

Ե. Սեթյանը 1835 թ. ընդօրինակում է ձեռագրի մի մասը, որի մեջ նաև սույն ժամանակագրությունը և նշում, որ այն «թուի նույնպէս... Շիրակացույն լինել, զի հասանէ ցաւորս իւր, ՃԼԴ (685) թուական հայոց»²⁰, Ուրեմն, 685 թ. համար (հայտնի չէ, թե ալդ ժամանակ ո՞ր չի Շիրակացին) ժամանակագրությունը ենթադրաբար վերագրում է Շիրակացուն: Բայց «Ցանկում» Սեթյանը «թուի լինել»-ը դնել է նետում և դրում. «Նորին Անանիայի պատմագրականը»: Հետագայում վստահորեն կամ երկբայությամբ այդ ժամանակագրությունը Անանիա Շիրակացու գործն են համարում Գ. Խալաթյանը, Ֆ. Կոնիբեբը, Բ. Սարգիսյանը, Մ. Աբեղյանը, Ա. Աբրահամյանը, Հ. Անասյանը և այլք²¹:

Ն. Ակինյանը «Դաւիթ քահանայի խմբագիր ժամանակագրութիւնը» հոդվածում գրում է. «Հ. Բ. Սարգիսյան միտած էր վերագրել ժամանակագրությունս Անանիա Շիրակացույ, Ա. Աբրահամյան անվարան համարեցավ Անանիայի հեղինակություն»²²: Ն. Ակինյանի կարծիքով «Դաւիթն է ժամանակագրութեանս հիւսողը» և նրա անունով էլ պետք է կոչվի «Դաւիթի քահանայի խմբագիր ժամանակագրութիւն»:

Դաւիթը ձեռագրի ստեղծողն է, խմբագրողը: Հ. Անասյանը, որ նույնպես հիշյալ ժամանակագրությունը Անանիա Շիրակացուն է համարում, նրա Զատկի ճառից բերում է «Ժամանական կանոնի» վերևում մեր քննած հատվածը (Ա) և սույն ժամանակագրության մի վկայությունը (Գ) համադրելով ցանկանում է նույնացման եզրեր գտնել և աւելացնել, որ նշված ժամանակագրությունը Շիրակացունն է:

Հ. Բարթիկյանը, համեմատելով ստորև բերված քաղվածքներից Ա-ն և Գ-ն, մերժում է Հ. Անասյանի տեսակետը. «Զատկի ճառում,—գրում է նա,— Հեսուն, հրեաների Եգիպտոսից դուրս գալը և Հորդանան գետն անցնելը հիշ-

20 ՄՄ, ձեռ. № 6228, էջ 79:

21 Տե՛ս Հ. Բարթիկյան. Շիրակացուն վերագրող ժամանակագրության և նրա բանաբառի հարցի շուրջը.—«Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967: Հմմտ. Ա. Մաթևոսյան. Անանիա Շիրակացու «Քննիկոնը».—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» 1974, № 7, էջ 75—76:

22 Ն. Ակինյան. Դաւիթ քահանայի խմբագիր ժամանակագրությունը.—«Հանդես ամսօրյա», Վիեննա, 1957, էջ 181—186:

վրա՝ 17 զատիկի օրը ճշտելու կապակցությամբ. այդ մասին է, որ Շիրակացու իսկ վկայությամբ խոսք է ասված նաև իր «Ժամանակական կանոնի նախապատմում հանդիսի» մեջ: Բայց «Ժամանակագրության» մեջ նման բանի մենք չենք հանդիպում: Տվյալ բաժնում պարզապես հերթականությամբ տրված է շրեա րահանալապետների պատմությունը, այդ թվում նաև Հեսուի Հորդանան դետն անցնելու պատմությունը²³:

Իսկ այժմ Զատիկի ճառից (Ա), Ստեփանոս Տարոնացու «Պատմութիւնից», Շիրակացու «Ժամանակական կանոնից» առնված քաղվածքը (Բ) համեմատենք նրան վերաբերող «Ժամանակագրութեան» (Գ) համապատասխան հատվածի՝ չեա (որն օգտագործել է Հ. Անասյանը):

Ա	Բ	Գ
(Անանիա Շիրակացի, Մատենադրություն, 1944, էջ 294)	(Ստ. Տարոնացի, Պատմութիւն, 1885, էջ 12)	(Անանիա Շիրակացի, Մատենադրություն, 1944, էջ 365)
Կւ առնէ իրրե ի նորոյ ռակիդրն կարդաց և աւրինաց, ռոպլս և Մովսէս յեւանելն յնդիդս. ռոպլ, քանդի և զանցանելն զՅորդանան դետով՝ Ոյս կողէ յնդիպտոսէ, որպէս և ի ժամանական կանոնի նախապատմում հանգիսի մերոյ ճառեցաք:	[Անանիա Շիրակացի] այսպէս ասէ. Յորժամ զՅորդանանաւ անց ժողովորդն և յերկիրն Աւետեաց առկայացաւ՝ զայն Ոյս կողէ, որպէս և պատգամաւորէին առ միմեանս թագաւորքն՝ եթէ Ազդ ել յնդիպտոսէ:	Յեսու որդի Նաւեայ իրրեւ անց ընդ Յորդանան դետ, եկաց երկիրն Քանանացոց ամս քսան եւ եւթ, եւ ի պատերազմունս՝ ամս վեց, յետ ժառանգեցոյցանելոյ զերկիրն վիճկաւ՝ եկաց ամս քսան եւ մի:

Առաջին և երկրորդ քաղվածքները, որոնք, իսկապես Շիրակացունն են, դույց են տալիս, որ ժամանակագրության տվյալ հատվածի նպատակն է ցույց տալ, թե ինչ է նշանակում կամ որն է համարվում «Ելք յնդիպտոսէ», իսկ երրորդում այդ բանը չկա, նույնիսկ չկան «Ելք» և «Նդիպտոս» բառերը: Այն սովորական ժամանակագրության շարադրությունն է: Այդ ժամանակագրության մեջ բացակայում է Ելքից մինչև տաճարի շինության ՆՂ (490) տարին, որ ընդունում է Շիրակացին և որով տարբերվում է Նվսերիոս Կեսարացուց և ուրիշներից:

Այս համադրությունից երևում է, որ դրանք տարբեր աղբյուրներից և հաճախ իրար հակասող վկայություններ են: Հետևաբար այն չի կարող Անանիա Շիրակացունը լինել:

Այս զուգադրությունն օգտագործելիս որոշ ուսումնասիրողներ, նրանց տարբերությունը ցույց տալու փոխարեն, գոյություն չունեցող նույնություն են գտնում, որովհետև չեն հաշտվում Շիրակացու «Քրոնիկոնը» կորած տեսնելու մտքի հետ: Դրանով նրանք երկու սխալ են թույլ տալիս. նախ՝ Շիրակացուն վերագրում են մի երկ, որ, ինչպես տեսանք, նրանք չէ: Երկրորդ՝ «Քրոնիկոնն» ու «Քննիկոնը» նույնացնելով, վերջինս դարձնում են ժամանակագրական երկ և փակում «Քննիկոնը» բացահայտելու ճանապարհը:

Պատմական աղբյուրների վկայությամբ Անանիա Շիրակացու «Ժամանական կանոնը» եղել է նրա «Քննիկոնում», որը, Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի վկայությամբ, կաթողիկոսարանում էր գտնվում մինչև Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, այսինքն 1019 թ.: Բնականաբար, նրանից հետո էլ այն մատչելի չէր ամենքին: Շիրակացուն վերագրվող ժամանակագրությունը, այն վիճակով, որ մենք այժմ ունենք, արտագրվել է 981 թ.: Նշանակում է, այն չի մտել Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մեջ, բայց գտնվել է կաթողիկոսական մատենադարանում, որտեղից Դավիթ քահանան արտագրել է այն իր որդուն: Այդ կարող էր անել միայն Մատենադարանին մոտ կանգնած մարդը, որպիսին էր Դավիթ քահանան:

23 Հ. Բարթիկյան. Նշվ. աշխ., էջ 67:

Այս ժամանակագրությունը տարբեր միավորների շարահյուսություն է, ժամանակագրական հերթականությամբ դասավորված, որ արել է ձեռագրի կազմող Դավիթ քահանան, ինչպես ինքն է վկայում՝ առեալ և սուղ ինչ ի սրբոյն Անգրէասի վարդապետութենէն և յայդոց նորին նմանեաց զշարադրութիւն տոմարաց հաւաքեցի ի գիրսս յայս²⁴։ Այստեղ ունենք Անգրեասի ժամանակագրությունը և ուրիշների նույնաբնույթ ժամանակագրությունները կամ տոմարական շարադրությունները։ Անտեսելով ձեռագիրը կազմողի սույն վկայությունը և ժամանակագրության կառուցվածքը, որի մեջ մատենագրական առանձին երկեր կողք կողքի են գրված իրենց խորագրերով, երբեմն նաև՝ հեղինակների անուններով, համարել են Անանիա Շիրակացու գործը, որովհետև ժամանակագրությունը հասնում է մինչև 685 թ.։

Գոնե այս թվականը պետք է հուշեր, որ Անանիա Շիրակացու ժամանակագրությունը, որպես «Քննիկոնի» մաս, 667 թ. արդեն ավարտված էր և հանձնված Անաստաս կաթողիկոսին, իսկ 685 թ. գրված գործը 667 թ. մահացած կաթողիկոսը ինչպե՞ս կարող էր ստանալ։

Վերջապես, Անանիա Շիրակացու մասին։

Շիրակի Անանե գյուղացի Հովհաննեսի որդի Անանիան VII գարի կեսերին ազգայրութիւն մերոյ ազգիս Հայաստանեաց տիրապետելուց և Աստվածաշնչի մեջ հմտանալուց հետո, ցանկանում է խորանալ իմաստասիրության մեջ։ Հայրենիքից հեռու, ութ տարի սովորում և ստանում է ժամանակի համար լուրջ կրթություն, առանց ուրուք լինելոյ ձեռնատու», «միայն քանի իմոյ անձինս» — գրում է նա, — «Եւ զհաւար արուեստս զայս (զարուեստ համարողութեանս — Ա. Մ) ... որ թագաւորաց է ցանկալի, բերի յաշխարհս մերս։ Բերում է, որ լուսավորի հայրենի աշխարհը «Երկիրը սրբոյն Գրիգորի», առաջնորդվելով Սողոմոն իմաստունի խրատով՝ «ստացիր զիմաստութիւնն, և յաւել արգել զտգիտութիւնն՝ խաւար կոչելով զծնողն»։ Ուրեմն «ձանաչել զիմաստութիւն և զխարտ» — ի փոխարեն՝ «ստացիր զիմաստութիւնն»։ Եվ իմաստությունը ձեռք բերելու համար գիրք է տալիս իր ժողովրդի ձեռքը, դպրոց է բաց անում։ «Զի իբրեւ եկի ես, բազումք ընթացան առ իս ուսումն»։ Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի հանձնարարությամբ գրում է «Քննիկոն» համայնագիտարանը, որի մեջ կարգում է նաև հայոց անշարժ տոմարը։

Անանիա Շիրակացին «Քննիկոնի» մաս հանդիսացող թվաբանության, երաժշտության, երկրաչափության և այլ առարկաների շարադրանքի մեջ աշխատում է հայ պատանուն որքան հնարավոր է կապել իր ժողովրդի անցյալի և ներկայի հետ։ Թվաբանության խնդիրներում հայ զինվորների քաջությունը, վաճառականների խելքը, հայրենի բնաշխարհի գեղեցկությունն ու հարստությունն է ներկայացնում, երկրաչափության մեջ մտնող աշխարհագրության սկզբում օգտագործում է Հիպոլիտոսի Մենդոց գրքի այն մասը, որտեղ հին գիր և դպրություն ունեցող ազգերի շարքում հիշատակվում է հայը։ Այնուհետև Պտղոմեոսից և Պապպոս Ալեքսանդրացուց քաղած երկրի երեք մասերի աշխարհագրության մեջ Հայաստանի մասին եղած տեղեկությունը չի բավարարում նրան և նա մանրամասնաբար շարադրում է իր հայրենի երկրի աշխարհագրությունը։ Ահա այդ մասին նրա խոստովանությունը. «Արդ կամիմ զդոսա (Մեծ Հայքի տասնհինգ աշխարհների մասին — Ա. Մ.) մանրամասնաբար պատմել, թէ եւ սակաւ ինչ աշխատեցի ի գիր և ի քարտէզ»։ Եվ ներկայացնում է Հայաստանը իր առավել ընդարձակ սահմաններով։ Իսկ «Մոզոնաչափիք» — ում, տարբեր քաղաքներ և աշխարհներ գնացող ճանապարհները՝ սկիզբ են առնում «Ի Դունա» (Դվին քաղաքից), տոմարում՝ բոլոր տոմարների բանալին հայոց թվականն է և այլն և այլն։

Եվ հնարավոր է, որ Շիրակացին իր «Ժամանական կանոնում», որը, փաստորեն, պատմություն է, որտեղ ամենից շատ հնարավորություն ունի հայ պատանուն ներկայացնելու Հայոց աշխարհը, ժողովուրդը, փառավոր դեպքեր

24 ՄՄ, ձեռ. № 2679, էջ 154ա։

և դեմքեր, շարագրի երբայական, եգիպտական, չոռմնական, հունական, ասորական, պարսկական ժամանակագրություն, առանց իր ժողովրդի պատմության:

Ոմանք այս «Քրոնիկոնն» են համարում Շիրակացու «Հրաշագան Քննիկոնը»: Մի՞թե Սանփանոս Տարոնացին այս ժամանակագրությունն էր համարում «Հրաշագան», իսկ Մագիստրոսը՝ «սեծ»: Չէ որ Շիրակացու ձեռքի աակ էր իրենից հարյուր տարի առաջ ապրած Աթանաս Տարոնացի տոմարագետի Հայկական տոսարն ու ժամանակագրությունը, որի մեջ Հռոմեական կայսրերի հետ ղուգընթաց հիշվում են Աբգար, Անանարուկ, Երվանդ, Արտաշես, Տիգրան, Արշակ, Խոսրով, Տրդատ, Արտավազդ, Սուրբ Գրիգոր (իր ժառանգներով), Կոստանյակուհ, Մեսրոպ, Սահակ Պարթև, Եզնիկ, Հովսեփ, Մովսես Խորենացի, Կյուրա, Հովհան Մանդակունի, Վարդանանց պապերազմ և այլն, մինչև Տեր Մովսես Եղվարդեցի, որի ժամանակ հայոց նոր թվակարգը կարգեց հենց ինքը՝ Աթանաս Տարոնացին:

Այս ամենը մեզ ազատում են Անդրեասի ժամանակագրությունը և նրան հարող մեծ և փոքր երկեր Անանիա Շիրակացու «Ժամանական կանոն» համարելուց և հնարավորություն ստեղծում որոնելու նրա գործը. չէ՞ որ մատենագիտական ցանկերից գիտենք նույնիսկ «Ժամանական կանոնի» սահմանները. «Անանիա Շիրակացի, Պատմութիւն սկիզբն առեալ յԱղամայ հասառոտ գաւաղանաւ իջանէ մինչև ի ժամանակս Անասաասա կաթողիկոսի»²⁵: Անաստաս կաթողիկոսը, անշուշտ, միակ հայ ներկայացուցիչը չէ Շիրակացու հազարամյակներ ընդգրկող ժամանակագրության մեջ: Իսկ նրան վերագրվող «Ծախանակագրության» մեջ նույնիսկ Անաստաս կաթողիկոսը չկա:

СТЕПАНОС ТАРОНАЦИ АСОХИК И «КРИТИКОН» АНАНИИ ШИРАКАЦИ

А. С. МАТЕВОСЯН

Резюме

Историк Степанос Таронаци Асохик (X—XI вв.) несколько раз обращается в своей «Всеобщей истории» к Анании Ширакаци и его «Критикону». Упомянув католикоса Анастаса Акореци (661—667 гг.), историк отмечает, что именно тот поручил Анании составление армянского неподвижного календаря—велел написать «Критикон», куда должен был войти и календарь. Анания выполнил поручение, но католикос, уже готовясь обсудить «Критикон» на епископском соборе, чтобы затем применить его на деле, внезапно умер. После его смерти никто не проявил интереса к неподвижному календарю. Степанос Асохик, излагая свою историю, имел под рукой «Критикон» Анании Ширакаци, часто обращался к нему и воспользовался вошедшей в него хронологией. Один из отрывков этой хронологии Анания привел в своем «Слове па Пасху Господню», и тот же отрывок мы встречаем в «Истории» Степаноса Асохика. Сравнение этого отрывка с соответствующим отрывком хронологии, приписываемой Анании Ширакаци, доказывает, что данное хронологическое произведение Анании не принадлежит.

²⁵ Հ. Անասյան. Հայկական ժամանակագրություն. Կ. Ա, Երևան, 1959, էջ 732—733: